ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 208/71-Ա «29» 10 2024թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ (ՄՈԳ) ՇԵՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սովորողներին ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի, «Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգի 22-րդ կետի, և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի, ԵՊՀ ռեկտորի 08.02.2022թ. թիվ 25/2 - Լ հրամանի պահանջներով.

հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ.

1. Երևանի պետական համալսարանում 2024-2025 ուսումնական տարվա համար ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստացող գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների (Կանոնակարգի 22,13 կետով սահմանված կարգավիճակ ունեցող) միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը սահմանել,
   - բակալավրիատում՝ 18. 5 – 19.49, որի համար տրամադրել 10% վարձավճարի մասնակի փոխհատուցում և (ՄՈԳ) 19.5 – 20.00՝ 15% վարձավճարի մասնակի փոխհատուցում:
   - մագիստրատուրայում՝ (ՄՈԳ) 19.00 – 19. 49 համապատասխանաբար 10% և (ՄՈԳ) 19.5 – 20. 00՝ 15% վարձավճարի մասնակի փոխհատուցում:
2. Անվավեր ճանաչել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2024-2025 ուսումնական տարվա համար վարձավճարի մասնակի փոխհատուցում գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը սահմանելու մասին» 28.08.2024թ. N164/2-Լ հրամանը.
3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ սովորողներին և աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ